
ՈՌԻՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 1921 թ. ՄԱՐՏԻ 16-Ի
ՍՈՍԿԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՍԲ
(1991–2020 թթ.)*

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Խորհրդային Ռուսաստան, քեմալական Թուրքիա, Ազգային ուխտ, ռուս-թուրքական բանակցություններ, Մոսկվայի պայմանագիր, Հայկական Հարց, Արևմտյան Հայաստան, Կարսի մարզ, Սուրմալուի գավառ, Նախիջևան, Ալեքսանդրապոլ:

Նախաբան

Արդեն երեսուն տարի է բաժանում մեզ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից: Այդ ժամանակահատվածում մեր երկիրը միջազգային հարաբերությունների օբյեկտից վերածվել է դրանց սուբյեկտի, ստեղծել իր նյութատեխնիկական բազան, տնտեսական իրավահավասար ու շահավետ հարաբերություններ հաստատել աշխարհի երկրների հետ, փորձում է թոթափել քաղաքական, միջպետական հարաբերությունների ոլորտում Խորհրդային Հայաստանից մնացած ծանր ժառանգությունը: Դրանում ամենաբարդը 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված ռուս-թուրքական պայմանագրի քաղաքական վերաարժեքումն է, քանի որ ռուս-թուրքական «բարեկամությունը» շարունակվում է 1921 թ. ոգով, իսկ Հայաստանն արդեն հարյուր տարի շարունակում է գոյություն ունենալ այդ պայմանագրով իրեն պարտադրված սահմաններում: Մինչդեռ այդ ընթացքում մեր տարածաշրջանում իրավիճակն արմատապես փոխվել է: Ներկայումս, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, գոյություն հունի պայմանագիրը կնքած Խորհրդային Ռուսաստանը, Հայաստանն անկախ պետություն է, իսկ Թուրքիան անթաքույց ձգտում է անդառնալիորեն կտրել վերջինիս Ռուսաստանից, մեկուսացնել և ոչնչացնել իբրև պետություն ու աշխարհադրական հասկացություն:

Խորհրդահայ պատմագիտության մեջ 1920–1921 թթ. հայ-թուրքական հարաբերությունները, դրանցում Խորհրդային Ռուսաստանի ազդեցությունը, 1921 թ. փետրվար–մարտ ամիսներին կայացած ռուս-թուրքական բանակցություններն ու կնքված Մոսկվայի պայմանագիրը, վերջինիս կապը 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի և 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հետ գնահատվել են Խորհրդային պետության ծավալապաշտական ծրագրերի տեսանկյունից՝ դրանք քողարկելով համաշխարհային սոցիալիստական հեղափոխության, հայ և Խորհրդա-թուրքական բարեկա-

* Ներկայացվել է 14. III. 2021 թ., գրախոսվել է 05. IV. 2021 թ., ընդունվել է տպագրության 08. IV. 2021 թ.:

մոլթյան մասին բարձրագույն ու սին զաղափարներով¹: Վերոնշյալ հարցերի նկատմամբ Սիյուռքի ազգային-կուսակցական գործիչների, գիտնականների մոտեցումների հիմքում, ընդհակառակը, դրված են հայ ազգային-պետական շահերը, պատմական արդարությունը սկզբունքն ու գործող միջազգային իրավունքի նորմերը²:

Հիմնախնդրի արդիականությունը և ուսումնասիրվածությունը հայաստանյան պատմագիտության մեջ

Դեռևս 1988 թվականին՝ Արցախյան ազգային-ազատագրական շարժման վերելքի պատմական օրերին, մամուլում տպագրվեց ՀՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱ թղթակից անդամ Հրանտ Ավետիսյանի «Պատմությունը մեր հիշողությունն է և հզոր զենքը» վերնագրով հոդվածը, որում առանցքայինը հայ ժողովրդի նկատմամբ գործադրված պատմական անարդարությունների, որոնց թվում Մոսկվայի պայմանագրի դեմ հետևողական պայքար մղելու զաղափարն էր³:

Մոսկվայի պայմանագրի նկատմամբ հասարակական հետաքրքրությունն աճեց հատկապես 1991 թվականից՝ նախ կապված պայմանագրի 70-ամյակի և Մոսկվայում ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի նախագահների՝ Միխայիլ Գորբաչովի ու Թուրգուլ Օզալի պաշտոնական հանդիպման արդյունքում 1991 թ. մարտի 16-ին խորհրդա-թուրքական բարեկամության, բարիդրացիության և համագործակցության պայմանագրի կնքման, այնուհետև՝ Հայաստանի անկախության վերականգնման ու դրա շնորհիվ հայաստանյան պատմագիտության ազգային ոգով զարգացման հնարավորությունների հետ: Մ. Գորբաչով – Թ. Օզալ հանդիպման առիթով «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, ապա «Литературная Армения» ամսագրում տպագրվեց երվանդ Սարգսյանի «Խորհրդա-թուրքական անդրկուլիսյան բանակցությունները Մոսկվայում 1921 թ. փետրվար-մարտ ամիսներին և մարտի

¹ Տե՛ս Բ. Ա. Борьян. Армения, международная дипломатия и СССР, ч. II. М.–Л., 1929; Ա. Ե ս ա յ ա ն. Հայաստանի միջազգային իրավական դրույթները (1920–1922), Երևան, 1967, Ս. Ալիսյանյան. Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917–1921 թթ.), Երևան, 1966, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), խմբ. Զ. Ս. Կիրակոսյան, Երևան, 1972, Մ. Վ. Արզումանյան. Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, Է. Ա. Զոհրաբյան. Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920–1922 թթ.), Երևան, 1979, Գ. Ա. Գալոյան. Պատմության քառուղիներում: Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Երևան, 1982:

² Տե՛ս Ս. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, Ալ. Խատիսյան. Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Բեյրութ, 1968, Գ. Լազեան. Հայաստան եւ հայ դատը: Հայկոռւսյա-րաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, Շ. Նաթալի (Յա. Տէր-Յակոբեան). Երեք դաշնագրեր (Աղէքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի), Պէյրութ, 1957, Զ. Մսրըլեան. Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագրերը 1920–1921 թթ.), Պէյրութ, 1979, Շ. Թորիկեան. Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976:

³ Տե՛ս «Հայաստանի կոմունիստ» (Երևան), 11. X. 1988:

16-ի պայմանագիրը» վերնագրով հոդվածը⁴։ Այդ հրապարակումներն առաջին քայլերն էին Մոսկվայի պայմանագրի քաղաքական վերաարժեքման, ազգային շահերի տեսանկյունից այն վերազնահատելու ուղղությամբ։

Հայաստանի երրորդ հանրապետության տարիներին Երվանդ Սարգսյանը⁵, Էդիկ Զոհրաբյանը⁶ և Գալուստ Գալոյանը⁷ զարգացրին իրենց գիտական մշակումները, իսկ Հրաչիկ Սիմոնյանը⁸, Հրանտ Ավետիսյանը⁹, Լենդրուշ Խուրշուդյանը¹⁰, Բաբկեն Հարությունյանը¹¹, Հակոբ Հակոբյանը¹², Աշոտ Մելքոնյանը¹³, Վլադիմիր Ղազախեցյանը¹⁴, Հայկ Ղազարյանը¹⁵, Արարատ Հակոբյանը¹⁶, Կարեն Խաչատրյանը¹⁷, Արմեն Մարուքյանը¹⁸, Ռեմ Ղազանչյանը¹⁹, Արա Պապյանը²⁰ հիմնախնդրի

⁴ Տե՛ս «Հայաստանի հանրապետություն» (Երևան), 16. III. 1991, Ե. Саркисян. За кулисами, как родился Московский договор 1921 г. — «Литературная Армения» (Ереван), 1991, № 1, с. 71–82.

⁵ Տե՛ս Ե. Սարգսյան. Դավադիր գործարք։ Հայաստան–Ռուսաստան–Թուրքիա, Երևան, 1995։

⁶ Տե՛ս Է. Ա. Զոհրաբյան. Նախիջևանյան հիմնահարցը (1920–1921), Երևան, 2010։

⁷ Տե՛ս Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999։

⁸ Տե՛ս Հր. Ռ. Սիմոնյան. Թուրք–Հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991։

⁹ Տե՛ս Հ. Ավետիսյան. Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 330–359։

¹⁰ Տե՛ս Լ. Խուրշուդյան. Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002։

¹¹ Տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, պատ. խմբ. Բ. Հարությունյան, հ. Բ, Երևան, 2008, էջ 110–116։

¹² Տե՛ս Հ. Հակոբյան. Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Երևան, 2002։

¹³ Տե՛ս Ա. Մելքոնյան. Հայոց պատմության դասերն ու պատգամները, Երևան, 2013, նույնի՝ Ցեղասպանություն և հայրենագրվում։ Ծանաչումից՝ հատուցում (հոդվածներ և հարցազրույցներ), Երևան, 2015։

¹⁴ Տե՛ս Վ. Ղազախեցյան. Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, 2006, նույնի՝ Մոսկվայի ռուս–թուրքական կոնֆերանսը։ 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը.— Հայոց պատմություն, հ. IV, գիրք I [Նորագույն ժամանակաշրջան (1918–1945 թթ.)], Երևան, 2010, էջ 324–339։

¹⁵ Տե՛ս Հ. Մ. Ղազարյան. Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 2010։

¹⁶ Տե՛ս Ա. Մ. Հակոբյան. Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, նույնի՝ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի պատմաիրավական գնահատականը (1920–1921 թթ.)— ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2007, № 2, էջ 17–30։

¹⁷ Տե՛ս Կ. Հ. Խաչատրյան. Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Երևան, 2007, նույնի՝ ՀՍԽՀ սահմանների հարցը 1921 թ. խորհրդա–թուրքական հարաբերությունների ոլորտում.— ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2010, № 1–2, էջ 36–58։ Կ. Խաչատրյան, Հ. Սուքիասյան, Գ. Բադալյան. Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920–1930-ական թվականներին, Երևան, 2020։

¹⁸ Տե՛ս Ա. Մարուքյան. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, 2014, էջ 121–137, նույնի՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի միջազգա–

Հայաստանյան պատմագրությունը հարստացրին օբյեկտիվ ու անաչառ դիրքերից գրված ուսումնասիրություններով, որոնք աչքի են ընկնում հայեցակարգային նոր մոտեցումներով:

Մոսկվայի պայմանագրի նկատմամբ իրավաքաղաքական հետաքրքրությունը կտրուկ աճեց նախ 2009 թվականին՝ կապված «Հայ-թուրքական սահմանի բացման» նպատակով անսպասելիորեն սկսված և հաջող ավարտի իրական հեռանկարից զուրկ բանակցային գործընթացի հետ, այնուհետև՝ 2016 թ. սկզբին, երբ սիրիական ճգնաժամի հետևանքով ռուս-թուրքական հարաբերությունների սրման պայմաններում Անկարայի նկատմամբ դիվանագիտական ճնշում գործադրելու նպատակով ռուսական կառավարող շրջանակների կողմից ոչ պաշտոնական մակարդակով հնչեցվեց Մոսկվայի պայմանագրի վերանայման հարցը²¹: Ներկայումս մեր տարածաշրջանում առկա ռազմաքաղաքական իրադրության պայմաններում այդ խնդիրը որքանով է հրատապ Հայաստանի Հանրապետության համար: Հայկական պետությունն արդյո՞ք ունի բավարար հնարավորություններ՝ հասնելու Մոսկվայի պայմանագրի վերանայմանը՝ իրեն ձեռնտու տարբերակով, և ո՞րն է լինելու դրա էությունը:

Ռուս-թուրքական գործակցության պատճառներն ու նախադրյալները

Դեռևս 1919–1920 թթ.՝ Փարիզի հաշտության միջազգային վեհաժողովում օսմանյան «ժառանգությունը» Ասիական թուրքիան, միմյանց միջև բաժանելու, Հայաստանի ազատությունն ու անկախությունը ճանաչելու Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Իտալիայի դիրքորոշումն առաջ բերեց թուրքիայում իշխանության համար պայքարող քեմալականների բուռն դիմադրությունը: Հենց այդ պատճառով վեհաժողովի աշխատանքներից մեկուսացված խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունում քեմալականներին համարում էին հուսալի դաշնակից թե՛ ընդդեմ Արևմուտքի պետությունների և թե՛ համաշխարհային սոցիալիստական հեղափոխության

յին-իրավական գնահատականը.— «Վէմ» համահայկական հանդես (Երևան), 2011, թիվ 2, էջ 129–139:

¹⁹ Տե՛ս Р. Казанджян. К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г.— «Вестник общественных наук» НАН РА, 1999, № 1, с. 183–187; Ն ու յ ն ի՝ К вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921 г.— Страны и народы Ближнего и Среднего Востока. XX. Ереван, 2001, с. 106–124; Ն ու յ ն ի՝ Русско-турецкие отношения 1920–1921 гг. и вопрос Армении в свете секретных документов московских архивов.— «Современное состояние и перспективы развития арменоведения». Сборник докладов международного симпозиума. Ереван, 2004, с. 201–227.

²⁰ Տե՛ս Ա. Պապյան. Հայրենատիրություն: Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր (հոգվածների ժողովածու), Երևան, 2012:

²¹ Տե՛ս <http://easaily.com/ru/news/2016/02/08/v-gosdume-predlozhili-rastorgnut-moskovskiy-dogovor-o-druzhbe-s-turciy-ot-1921-goda>; <http://newsarmenia.am/news/politics/mid-rf-izuchit-vopros-rastorzheniya-dogovora-po-kotoromu-gora-ararat-peres-hla-k-turtsii/>

Համար մղվող պայքարում: Այդ հեղափոխության իրականում աշխարհի ժողովուրդների ազատագրական ու դասակարգային պայքարի օգտագործմամբ խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական գերիշխանությունն Արևելքի երկրներում հաստատելու ուղին անցնում էր Հայաստանով ճիշտ այնպես, ինչպես Համաթուրքական պետության ստեղծման ծրագրում Հայաստանով էր անցնում Բաքուն Կ. Պոլսին միացնող ճանապարհը: Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական փաստաթղթերում, անտեսելով 1918–1920 թթ. հայոց անկախ պետականության փաստը, Հայաստանը դիտվում էր որպես ամբողջի՝ նախկին ռուսական կայսրության և ոչ թե պատմական Հայաստանի մի մասը: Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա հաշվի առնելով, որ իմպերիալիզմի դեմ պայքարում Արևելքի ժողովուրդներին կազմակերպողն ու ղեկավարողը Թուրքիան էր՝ խորհրդային կառավարությունը ձգտում էր նախևառաջ միջազգային դիվանագիտության չրջանառությունից հանել Հայկական հարցը և դրանով իսկ ապահովագրել Թուրքիան 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի հաշտության միջազգային պայմանագրով ու նոյեմբերի 22-ին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով «հազանապես Հայկական վտանգից»: Փաստորեն, խորհրդային կառավարությունը, տարածքային գիշումներ անելով ի հաշիվ Հայկական հողերի, ձգտում էր Թուրքիան կողմնորոշել դեպի խորհրդային Ռուսաստան և այն հենակետ դարձնել բոլշևիզմի գաղափարներն Արևելքում տարածելու, Ռուսաստանի քաղաքական գերիշխանությունն ապահովելու համար: Կար մեկ այլ նպատակ ևս: Ինչպես նկատում է Հր. Միմոնյանը, «Թուրքիային և Ադրբեջանին տրվող գիշումները Մոսկվան դիտում էր իբրև մոնոպոլիստական աշխարհին տրվող գիշումներ, որի հետ բոլշևիկյան Ռուսաստանը հույս ուներ ամուր և տևական դաշինք ունենալ՝ ընդդեմ արևմտյան գաղութատեր իմպերիալիստական տերությունների»²²: Գաղափարաքաղաքական այս հենքի վրա էլ 1920 թվականին Անկարայում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) և Մուստաֆա Քեմալի կառավարության կազմավորումից հետո սկզբնավորվեց ռուս-թուրքական գործակցությունը: Թեև խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի արտաքին քաղաքական նպատակները էապես տարբերվում էին, սակայն Անտանտի երկրներին՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ու նրանց դաշնակից ԱՄՆ-ի մրցակիցը և հակառակորդը լինելու հանգամանքը վճռորոշ նշանակություն ունեցավ խորհրդաքեմալական դաշինքի ձևավորման համար:

Հայաստանի խորհրդայնացումից հետո քաղաքական նոր պայմաններում թվում էր, թե հնարավոր էր նոր հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ և հասնել Ալեքսանդրապոլի հաշտության ստորագրուցիչ պայմանագրի վերանայմանը. պայմանագիր, որը, ոչ առանց խորհրդային Ռուսաստանի աջակցության, քեմալական Թուրքիան պարտադրել էր 1920 թ. թուրք-հայկական պատերազմում պարտություն կրած Հայաստանի Հանրա-

²² Հր. Միմոնյան. Նախիջևանի հարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում. — «Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում» (գիտաթողովի նյութեր), Երևան, 2001, էջ 9:

պետությունը²³: Գ. Գալոյանի համոզմամբ, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո փոխվել էր ոչ միայն իրադրությունն Անդրկովկասում, այլև Հայկական հարցի լուծման մեջ շահագրգիռ տարածաշրջանային պետությունների քաղաքականությունը: Հայաստանի խորհրդայնացումից հետո Ռուսաստանը սկսեց հանդես գալ դաշնակից Հայաստանի շահերի պաշտպանությամբ այնքանով, որքանով դա թույլ չէր տա վերջնականապես «հրել» Հայաստանն Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած Գլխավոր դաշնակից տերությունների²⁴ «գիրկը»²⁵: Միևնույն ժամանակ բոլշևիկյան կառավարությունը ձգտում էր չկորցնել քեմալականների հետ ձեռք բերած բարեկամությունը: Ընդ որում, հայ ժողովրդի կենսական շահերը ստորադասվում էին Արևելքում սոցիալիստական հեղափոխությունը տարածելու անփառունակ զաղափարին և այդ հեղափոխության թվացյալ կենտրոն թուրքիայի հակահայկական նկրտումներին: Քեմալական թուրքիան իր հերթին ձգտում էր չկորցնել 1920 թ. Հայաստանի դեմ զավթողական պատերազմի արդյունքում նվաճած տարածքները և «ատամներ էր ցույց տալիս» խորհրդային Ռուսաստանին, երբ վերջինս փորձում էր պաշտպանել Հայաստանին²⁶: Այդ առիթով Ա. Հակոբյանը մատնանշում է քեմալական կառավարության կողմից 1920 թ. Ալեքսանդրապոլի հաշտության բանակցություններին Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության մերժման փաստը՝ դա բացատրելով Ռուսաստանի միջնորդությամբ բանակցություններում նախապատերազմյան՝ 1914 թ. ռուս-թուրքական սահմանը վերականգնելու նրա պահանջի անցանկալի հավանականությամբ²⁷:

Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում դրված էր 1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսում ընդունված Ազգային ուխտը, որում կենտրոնականը իրերդենտիզմի, այսինքն՝ թուրքերով բնակեցված բոլոր տարածքները թուրքական պետությանը միավորելու և վերամիավորելու համաթուրքական

²³ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ.՝ Գ. Գալոյան, Վ. Ղազարխեյյան, Վ. Մելիքյան, Ս. Միրզոյան, Ա. Վիրաբյան, Երևան, 2000, վավ. 358, էջ 391–394, Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Сост., отв. ред., автор пред. и коммент. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1. М., 2003, док. № 967, с. 291–293; է. Ա. Զ ո հ ր ա բ յ ա ն. 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 318–321, Հ. Հ ա կ ո բ յ ա ն. նշվ. աշխ., էջ 294–295:

²⁴ Գլխավոր դաշնակից տերություններն էին՝ Բրիտանական կայսրությունը, ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, իսկ Դաշնակից տերությունները՝ Պորտուգալիան, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը, Ռումինիան, Սերբա-խորվաթա-սլովենական պետությունը, Չեխոսլովակիան, Հայաստանը, Հեջագը (տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), փաստ. № 338, էջ 676):

²⁵ Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 402–403:

²⁶ Նույն տեղում, էջ 403:

²⁷ Տե՛ս Ա. Մ. Հ ա կ ո բ յ ա ն. Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 42:

գաղափարն էր: Իսկ դա նշանակում էր, որ Արևմտյան Հայաստանի, Կարսի մարզի և այլ տարածքների հայաթափումը բռնի տեղահանության ու կոտորածների միջոցով և այնտեղ մահամեղական բնակչության մեծամասնությունն ստեղծելը Թուրքիան օգտագործելու էր ու, ի վերջո, օգտագործեց Հայոց պահանջատիրության դեմ: Փաստորեն, քեմալականների իշխանության գալուց հետո Թուրքիայում փոխվել էր միայն համաթուրքականության նպատակին հասնելու դիվանագիտությունը. Ռուսաստանի դեմ պատերազմելու տակտիկային փոխարինել էր նրա հետ «բարեկամության», «համաշխարհային խմբերիալիզմի դեմ պայքարի» տակտիկան: Այդ էր վկայում ԹԱՄԺ նախագահ Մ. Քեմալի նամակն ուղղված Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության (ՌՍՖՍՀ) ղեկավարությունը, որում նա պարտավորվում էր Խորհրդային Ռուսաստանի հետ պայքարել ընդդեմ իմպերիալիստական կառավարությունների՝ «հանուն բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրության», պարտավորվում էր ազդել Ադրբեյջանի վրա, որպեսզի վերջինս ամրապնդեր քաղաքական կապերը Խորհրդային Ռուսաստանի հետ՝ հուսալով ստանալ նրա աջակցությունը Թուրքիային սպառնացող իմպերիալիստական թշնամիների դեմ պայքարելու համար²⁸: «Կովկասում իմպերիալիստների դեմ» պայքարելու մասին խոսելիս Քեմալ փաշան նկատի ուներ պայքարն ընդդեմ Սևրի պայմանագրի, որի նախագիծը հրապարակվեց 1920 թ. ապրիլին: Քեմալական Թուրքիայի իրական նպատակների մասին էր վկայում նաև Մ. Քեմալի ելույթն Անկարայում 1920 թ. օգոստոսի 14-ին, որում նա նշում էր. «Բոլորին հայտնի է, որ մեր տեսակետը և սկզբունքները բոլշևիկյան չեն, և առ այսօր մենք բացարձակապես ու երբեք չենք մտածել և որևէ ջանք էլ չենք գործադրում, որպեսզի մեր ժողովրդին հարկադրենք ընդունել բոլշևիկյան սկզբունքները: Մենք համոզված ենք, որ մեր ազգի կյանքի ու ապագայի երաշխիքները կապված են իր ազգային իրեքների և սկզբունքների հետ»²⁹: Այս իրողությունը քաջատեղյակ Խորհրդային Ռուսաստանը, այնուամենայնիվ, ճանաչում էր Թուրքական Ազգային ուխտը՝ ելնելով իր աշխարհաքաղաքական շահերից, ինչն էլ կանխորոշեց ռուս-թուրքական բանակցությունների ելքն ի վնաս հայ ազգային շահերի:

Ռուս-թուրքական հակահայկական գործակցությանը նաև նպաստում էր Արևմուտքի պետությունների նոր դիրքորոշումը Հայկական հարցում: Հարցն այն է, որ Խորհրդայնացումից հետո Հայաստանն անմիջապես զրկվեց Գլխավոր դաշնակից տերությունների թեկուզ թույլ պաշտպանությունից և հայտնվեց նրանց հակառակորդների ճամբարում: Այս փաստն այլևս ավելորդ դարձրեց քեմալական Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև մերձեցման ձգտումները թաքցնելը: Ռուս-թուրքական բանակցությունների սկզբից քեմալականները սկսեցին այդ պետությունների միջոցով ճնշում գործադրել Խորհրդային Ռուսաստանի վրա՝ իրենց ցանկալի

²⁸ Տե՛ս Ա. Ավագյան. Թուրքիայի՝ որպես մահամեղականների հովանավորի, դիրքորոշումը Մոսկվայի կոնֆերանսի ընթացքում. — «Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում» (գիտաժողովի նյութեր), էջ 47–48:

²⁹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16. III. 1991:

զիջումները ստանալու նպատակով: Թուրքական դիվանագիտությունն իր այս հաշվարկներում չսխալվեց: Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, Գ. Գալոյանի համոզմամբ, նրանց դիվանագիտության ռազմավարական նպատակը հանգում էր ռուս-թուրքական հարաբերությունների սրմանը՝ ընդհուպ գինված առճակատում: Եվրոպական ազդեցիկ պետությունները մրցում էին միմյանց հետ, թե ով առաջինը կհրաժարվեր Սևրի պայմանագրից, որպեսզի առավել նպաստավոր պայմաններով ամրապնդեր իր դիրքերը Թուրքիայում³⁰:

1921 թ. ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսը

Այս պայմաններում դեռևս 1920 թ. ապրիլին սկսված ռուս-թուրքական բանակցությունները 1921 թ. փետրվարին թեև կոխեցին երկրորդ ավարտական փուլ, որի նպատակն էր՝ կարգավորել ռուս-թուրքական հարաբերությունները, մասնավորապես՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո առաջացած սահմանային հարցերը³¹: Ռուսաստանը ձգտում էր Թուրքիան վերջնականորեն կտրել Անտանտի երկրներից՝ բավարարելով նրա ներկայացրած բոլոր պահանջները հայկական տարածքների վերաբերյալ: Իսկ թուրքական կառավարությունը երկակի խաղ էր խաղում՝ խուսափելով Ռուսաստանի և Անտանտի պետությունների միջև ու ստիպելով խորհրդային կառավարությանը գնալ նորանոր զիջումների: Մասնավորապես, Անկարայի կառավարությունը կարևորում էր հատկապես Հայաստանի՝ որպես պետության ոչնչացման խնդրում Ռուսաստանից օգնություն ստանալը: Ակնկալվում էր, որ վերջինիս կողմից Ալեքսանդրապոլի պայմանագրի ճանաչումը կարող էր լինել առաջին և կարևոր քայլն այդ գերխնդրի լուծման ուղղությամբ:

Նախապես կոնֆերանսին հրավիրված էին խորհրդային Հայաստանի և խորհրդային Ադրբեջանի պատվիրակությունները: Հայաստանի պատվիրակության կազմում էին՝ արտգործոց Սեյդախանյանը (նախագահ) և Մոսկվայում Հայաստանի ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը: Նրանք պատրաստել էին «Հայաստանը մինչև վերջին հայ-թուրքական պատերազմի սկիզբը» վերնագրով փաստաթուղթը, որում հայկական կողմն ակնկալում էր Հայաստանի սահմանների որոշում, ըստ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի դրությամբ, այսինքն՝ օրակարգ բերվում էր Կարսի մարզը, Ալեքսանդրապոլը և Սուրմալուի գավառը Հայաստանին վերադարձնելու հարցը:

Թուրքական պատվիրակությունն Անկարա-Մոսկվա ճանապարհն ընդմիջեց Բաքվում, որտեղ զրույցներ ունեցավ Ադրբեջանի ղեկավարների

³⁰ Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 402–403:

³¹ 1920 թ. ապրիլից 1921 թ. մարտն ընկած ժամանակահատվածում քեմալական Թուրքիայի և խորհրդային Ռուսաստանի միջև տեղի է ունեցել միջկառավարական երկու կոնֆերանս՝ առաջինը՝ 1920 թ. հուլիսի 14-ից օգոստոսի 24-ը, որում քննարկվել է երկու պետությունների միջև հարաբերությունները կարգավորող պայմանագիր կնքելու հարցը, իսկ երկրորդը՝ 1921 թ. փետրվարի 26-ից մարտի 16-ը:

Հետ: Նրանց հակահայկական ծրագրերի մասին էին վկայում Խորհրդային Ադրբեյջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովի կողմից 1921 թ. փետրվարին ՌՍՖՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Վլադիմիր Լենինին հասցեագրված երկու նամակները: Դրանց հեղինակը նրբորեն հասկացնում էր, որ եթե Մոսկվայի Հայկական հարցի պատճառով իրենից վաներ թուրքերին, ապա վերջիններս կարող էին Ռուսաստանի դեմ ոտքի հանել մահմեդական աշխարհը կամ հակախորհրդային ապստամբություն բարձրացնել ու նետվել Մեծ Բրիտանիայի գիրկը: Ադրբեյջանը պահելու համար, նշում էր Ն. Նարիմանովը, Անկարայի հետ պետք էր ամուր դաշինք կնքել այնպես, որ Հայկական հարցը բանակցություններում դեր չխաղար³²:

Հակահայկական կեցվածք էր որդեգրել նաև Ռուսաստանի ազգությունների գործերի ժողկոմ Իոսիֆ Ստալինը, ով երկրորդ դեմքն էր Ռուսաստանում Վլ. Լենինից հետո՝ որպես պետական քաղաքականությունը մշակող և կենսագործող ղեկավար պաշտոնյա: Կոնֆերանսի նախօրեին նա Վլ. Լենինին նախագրողացնում էր ՌՍՖՍՀ արտգործժողկոմ Գեորգի Ջիզերինի դիրքորոշման վերաբերյալ, որպեսզի վերջինս Հայկական հարցը չբարձրացներ, ինչպես արել էր 1920 թվականին. «Ընկեր Լենին,— գրում էր Ի. Ստալինը,— ես միայն երեկ իմացա, որ Ջիզերինը իր ժամանակին իրոք թուրքերին է ուղարկել Վանը, Մուշը և Բիթլիսը, թուրքերի խոշոր գերակշռությամբ թուրքական այդ նահանգները Հայաստանի օգտին դատարկելու տխմար և սաղրիչ պահանջը:

Հայկական իմպերիալիստական այդ պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Անհրաժեշտ է Ջիզերինին արգելել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով հուշագրեր ուղարկել թուրքերին»³³: Դրանից մի քանի օր անց, դարձյալ մինչև կոնֆերանսի բացումը, Ի. Ստալինն ընդունեց թուրք պատվիրակներին և Հայաստանի տարածքների խնդիրն օրակարգ մտցնելու մասին նրանց հարցին պատասխանեց. «Հայաստանի հարցը դուք ինքներդ լուծել եք: Եթե դեռ չլուծված ինչ-որ բան մնացել է, ապա դա ևս դուք ինքներդ լուծեք»³⁴: Փաստորեն, Խորհրդային Ռուսաստանը բանակցությունները թուրքիայի հետ վարում էր երկու «աստառով»՝ պաշտոնական և անդրկուլիսային: Խորհրդային պետության արտաքին քաղաքականության պաշտոնական «ազնիվ», իսկ իրականում ձևական ձգտումներն արտահայտում էր Գ. Ջիզերինը: Նա հմուտ պետական գործիչ էր, ձգտում էր ընդառաջել հայերին, բայց ստիպված էր իր քայլերը համապատասխանեցնել «վերևից» տրված հրահանգներին: Բանակցություններում որոշիչ դեր էին խաղում անդրկուլիսային հանդիպումներն ու գաղտնի գրազրույթներ, որոնք անցկացնում և վարում էին Վլ. Լենինը, Ի. Ստալինը, ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչներ Բորիս Լեզրանը (Հայաստան) և Բուդու Մզիվանին (Թուրքիա)³⁵: Այդ հանգամանքով և բանակցությունների ընթացքի

³² Տե՛ս Հր. Սիմոնյան. Նախիջևանի հարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, էջ 9, նաև «Հայաստանի Հանրապետություն», 16. III. 1991:

³³ «Հայաստանի Հանրապետություն», 16. III. 1991:

³⁴ Նույն տեղում:

³⁵ Տե՛ս Վ. Ղազարխանյան. Հայաստանը 1920–1940 թթ., էջ 95:

նկատմամբ Ի. Ստալինի անմիջական վերահսկողությամբ է բացատրվում Գ. Ջիզերինի նահանջը Հայկական հարցում ունեցած նախկին տեսակետից: Նշենք, որ թուրքերի պահանջով վերջինիս տեղակալ հայազգի Լևոն Կարախանը, ով մասնակցել էր նշյալ անդրկուլիսային հանդիպումներին, չընդգրկվեց Ռուսաստանի պատվիրակության կազմում: Կոնֆերանսի նախօրեին թուրքիայի և Ռուսաստանի պատվիրակությունները հայտարարեցին, որ նպատակահարմար չեն գտնում արդեն Մոսկվա ժամանած հայ ներկայացուցիչների մասնակցությունը կոնֆերանսի աշխատանքներին: Դրանով Ռուսաստանն ու թուրքիան ոտնահարեցին հայկական պետության իրավունքները, զրկեցին նրան իր կամքն արտահայտելու հնարավորությունից: Հայկական պատվիրակության չմասնակցելը հիմնավորելու նպատակով կոնֆերանսի աշխատանքներին մասնակցություն չունեցավ նաև Ադրբեջանի պատվիրակությունը: Սակայն այդ հանգամանքը որևէ կերպ չէր վտանգում Ադրբեջանի շահերը, քանի որ մոսկովյան կոնֆերանսում նրա շահերը պաշտպանելու էր թուրքական պատվիրակությունը: Ըստ էության, բոլոր խնդիրները վճռված էին նախապես, և կոնֆերանսը միայն պիտի վավերացներ հայկական տարածքների բռնազավթումը թուրքիայի կողմից ու ամրագրեր Հայաստանի առկա սահմանները:

Ահա այսպիսի իրադրության պայմաններում թուրք-ադրբեջանա-հայ-ռուսական միացյալ կոնֆերանսի փոխարեն 1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում բացվեց ռուս-թուրքական կոնֆերանսը: Հարց է առաջանում. ինչո՞ւ Հայաստանին հնարավորություն չտրվեց մասնակցելու դրան:

Դեռևս 1921 թ. փետրվարի 18-ին Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀԾԴ) գլխավորությամբ Հայաստանում բռնկված հակախորհրդային ապստամբությունը և ՀՀ վերջին վարչապետ Ս. Վրացյանի նախաձեռնությամբ Հայրենիքի փրկության կոմիտեի (ՀՓԿ) ստեղծումը հայտնի էին դարձել Մոսկվայում: Ավելին, մարտի 12-ին Ս. Վրացյանը Գ. Ջիզերինին հեռագրեց Ալ. Բեկզադյանին լիազորություններից զրկելու մասին: «Մարտի 12» ամսաթիվին ինքնըստինքյան վկայում է, որ Ս. Վրացյանի հեռագիրը չէր կարող օգտագործվել երկու շաբաթ առաջ սկսված բանակցություններից Հայաստանի ներկայացուցիչներին դուրս թողնելու համար: Ինչ վերաբերում է ՀՓԿ-ին, ապա պետք է նկատել, որ նա իշխանություն էր խորհրդային Հայաստանի մի մասում, նրա կողքին շարունակում էր գոյություն ունենալ ու գործել խորհրդային իշխանությունը՝ ի դեմս Սարգիս Կասյանի և Գևորգ Աթարբեկյանի ղեկավարած Հայաստանյան ռազմահեղափոխական երկու կոմիտեների: Այնպես, որ ցանկության դեպքում խորհրդային իշխանությունը կամ ՀՓԿ-ն կարող էին մասնակից դարձվել բանակցություններին: Փաստորեն, Հայաստանում ստեղծված վիճակը ոչ թե պատճառ, այլ առիթ էր՝ նրան զրկելու իրեն վերաբերող հարցերի քննարկումից: Հայաստանի բացակայությամբ՝ ի վնաս նրա, լուծվեցին հայկական տարածքների պատկանելության հարցերը: Տեղի ունեցածը միջազգային իրավունքի պատմության մեջ աննախադեպ փաստ էր. անկախ պետություն համարվող Հայաստանը դուրս մղվեց բանակցություններից՝ թուրքիային ձեռնառու որոշումներ կայացնելու համար: Չնայած միամտություն կլիներ կարծել, թե

Հայաստանի մասնակցությունը կարող էր ազդել դրանց ընթացքի վրա: Մանավանդ, որ սկզբունքային որոշումներն ընդունվել էին ոչ թե բանակցությունների միջոցով, այլ մինչ այդ՝ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի ու նրա Քաղբյուրոյի կողմից:

Կոնֆերանսի ընթացքում Ռուսաստանի դիվանագիտության ջանքերն ուղղված էին Մեծ Բրիտանիայի հետ Թուրքիայի մերձեցումը կանխելուն. նույն օրերին Լոնդոնում ընթանում էին թուրք-անգլիական բանակցություններ, որոնց առիթով էլ Ռուսաստանի ազգությունների գործերի ժողկոմատի «Жизнь национальностей» պաշտոնաթերթում տպագրվեց ՌՍՖՍՀ ազգությունների ժողկոմատի քարոզչության և Արևելքի ժողովուրդների գործողության խորհրդի անդամ Անատոլի Սկաչկոյի «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում» վերնագրով հոդվածը: Այն Հայաստանի սահմանային հարցերում Խորհրդային Ռուսաստանի իրական դիրքորոշման արտացոլումն էր: Ա. Սկաչկոն, որին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահ Գրիգորի (Սերգո) Օրջոնիկիձեն անվանել է «թուրքական իմպերիալիզմի դատապաշտպան»³⁶, գրում է. «Անհրաժեշտ է, որ Խորհրդաժողովի մասնակից պետությունները միմյանց կատարեն այնպիսի զիջումներ, որոնք թույլ կտան վերացնելու փոխադարձ դժգոհանքի և անվստահության արմատները... Այս բոլոր նկատառումները հիմնականում վերաբերում են Հայաստանին, քանի որ ոչ Ռուսաստանը, ոչ էլ Ադրբեյջանը Թուրքիայի հետ վիճելի ոչ մի հարց չունեն: Խորհրդաժողովի գլխավոր հարցը հայկական է, ուրիշ խոսքով՝ Թուրքիայի և Հայաստանի միջև բոլոր թյուրիմացությունների հարթումը և բարեկամական հարաբերությունների հաստատումը... Հայաստանը անկասկած պիտի հարկադրվի ղեկավարվել ազգային մեծագույն զոհաբերությունների վերաբերյալ լենինյան սկզբունքով: Նա պիտի հարկադրվի հրաժարվել ոչ միայն Մեծն Հայաստանի վերաբերյալ դաշնակցականների իմպերիալիստական ծրագրերից, այլև, հնարավոր է, նույնիսկ մշտապես հայկական անվանված հողատարածքների միավորման ավելի համեստ ցանկությունից... Եվ եթե նույնիսկ Բիթլիսից ու Վանից գաղթականները մերօրյա Հայաստանում աննկարագրելի զրկանքներ են կրում, եթե նույնիսկ Թուրքիայում մնացած հայերն այժմ չարունակում են հետապնդվել ու ճնշումների ենթարկվել կառավարության կողմից, Հայաստանին համենայն դեպս մինչև մի որոշ ժամանակ ուրիշ բան չի մնում անել, քան հաշտվել դրա հետ ու համաշխարհային հեղափոխության շահերին զոհաբերել և՛ իր երբեմնի հողատարածքները, և՛ իր ժողովրդի այնտեղ մնացած հատվածները: Հայաստանը պիտի հարկադրվի հրաժարվել ոչ միայն հողատարածքներից, որոնք արդեն իսկ մտել էին անկախ Հայաստանի կազմի մեջ: Կարսի և Արդահանի նահանգներն այսուհետև պետք չէ կոմիսնձոր լինեն Հայաստանի և Թուրքիայի միջև ... »³⁷:

³⁶ «Հայաստանի Հանրապետություն», 16. III. 1991:

³⁷ «Жизнь национальностей» (М.), 04. III. 1921.

1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը

Մոսկվայի ռուս-թուրքական բանակցություններն ավարտվեցին 1921 թ. մարտի 16-ին: Այդ օրն էլ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը: Նշենք, որ Հայաստանի ազգային արխիվում, փաստաթղթերի ժողովածուներում և պատմագիտական աշխատություններում չըջանառության մեջ է եղել պայմանագրի ռուսերեն տարբերակը³⁸:

Մոսկվայի պայմանագիրը բաղկացած է ներածական բաժնից՝ պրեամբուլայից, 16 հոդվածից և մեկ հավելվածից՝ 1 (A), 1 (B), 1 (C) մասերով:

Պայմանագրի պրեամբուլայում հայտարարվում էր, որ ՌՍՖՍՀ և ԹԱՄԺ կառավարությունները, «բաժանելով ազգերի եղբայրության և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքները, նշելով իրենց միջև գոյություն ունեցող համերաշխությունը իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում, ինչպես նաև այն իրողությունը, որ երկու ժողովուրդներից մեկի համար ստեղծված ամեն տեսակ դժվարություն վատթարացնում է մյուսի դրությունը և ամբողջովին խանգարված միմյանց միջև մշտական սրտագին փոխհարաբերությունների ու երկու կողմերի փոխադարձ չահերի վրա հիմնված անխղճ անկեղծ բարեկամություն հաստատելու ցանկությամբ, որոշեցին կնքել բարեկամության և եղբայրության պայմանագիր»³⁹:

Ըստ Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածի, Պայմանավորվող կողմերը համաձայնում էին չճանաչել իրենցից յուրաքանչյուրին ուժով պարտադրված միջազգային-իրավական որևէ ակտ: Ըստ այդմ, ՌՍՖՍՀ կառավարությունը համաձայնում էր չճանաչել Թուրքիային վերաբերող և պայմանագրի կնքման պահին նրա կառավարության կողմից չճանաչված միջազգային ակտերը: Միևնույն ժամանակ Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի իրավունքները թուրքաբնակ այն բոլոր տարածքներում, որոնք «մտցված են 1920 (1336) թվականի հունվարի 28-ի թուրքական Ազգային ուխտի մեջ»⁴⁰:

³⁸ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 32–40, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), էջ 499–507, Ցավալի պայմանագրեր, կազմ. Տ. Ղ. Սահակյան, Երևան, 2007, էջ 377–383, Документы внешней политики СССР, т. III (1 июля 1920 г. – 18 марта 1921 г.). М., 1959, док. № 342, с. 597–604. Ա. Հակոբյանի գնահատմամբ, Ռ. Ղազանչյանի կողմից գիտական չըջանառության մեջ դրված նախկինում հանրությանն անհայտ, գաղտնագերծված զգալի թվով արխիվային փաստաթղթերը վկայում են (Р. Казанджян. К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г, с. 183–187), որ Մոսկվայի պայմանագիրը ստորագրվել է ոչ թե մարտի 16-ին՝ Լոնդոնում անգլո-ռուսական առևտրատնտեսական համաձայնագրի կնքման օրը, այլ՝ որոշակի նկատառումներով, երկու օր ուշ՝ մարտի 18-ին, բայց պայմանագրի վրա հետին թվով պաշտոնապես նշվել է մարտի 16-ը: Ա. Հակոբյանն այդ մասին հանգամանալից պարզաբանում է ներկայացրել իր աշխատության մեջ (Ա. Մ. Հակոբյան. Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 174–178):

³⁹ Տե՛ս Документы внешней политики СССР, т. III, док. № 342, с. 597.

⁴⁰ Նույն տեղում, էջ 597–598:

Հ. Հակոբյանի և Վ. Ղազախեցյանի գնահատմամբ, ընդունելով այդ հոգևածը, Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում էր 1917 թ. դեկտեմբերի 29-ին իր իսկ ընդունած «Թուրքահայաստանի մասին» հրովարտակից և Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթները ճանաչում էր որպես թուրքական տարածքներ⁴¹: Նա նաև հրաժարվում էր ճանաչել 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագիրը, քանի որ այն չէր ճանաչում Թուրքիայի կառավարությունը: Այդպիսով Խորհրդային իշխանությունը տարագիր Հայերի առջև փակում էր Հայրենիք վերադառնալու ուղիները՝ «չքանում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն, այսինքն՝ Արևելյան Հայաստանի թուրքերի գավթած մասերը, որոնք ճանաչվում էին իբրև Թուրքիայի սեփականությունը»⁴²: Նշենք, որ միևնույն ժամանակ Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի գավթողական շահերից բխող Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Հ. Հակոբյանը նշում է՝ «վերադարձի իրավունքի փոխարեն 1921 թ. Մոսկվայի պայմանագիրը 12-րդ հոգվածով լրացնում էր Հայերի բռնագաղթը, շեշտելով, որ «... մինչև 1918 թվականը Ռուսաստանի կազմի մեջ մտնող այն տերիտորիաների բոլոր բնակիչները, որպիսիք սույն Պայմանագրի հիման վրա Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական կառավարությունն այսօր ընդունում է որպես Թուրքիայի սուվերենության տակ գտնվող տերիտորիաներ, ունեն իրենց ունեցվածքը կամ դրա արժեքն իրենց հետ վերցնելով Թուրքիայից ազատ հեռանալու իրավունք»⁴³: Այլ կերպ ասած՝ քեմալականների բռնագաղթած տարածքներում մնացած հատուկենտ Հայերին առաջարկվում էր հեռանալ Հայրենիքից: Ոչ մի խոսք մինչև այդ բռնագաղթի ենթարկված Հայերի ճակատագրի ու նրանց թողած ունեցվածքի մասին: Մինչդեռ հաջորդ 13-րդ հոգվածը հավաստում էր, որ «Ռուսաստանը պարտավորվում էր իր հաշվին Հայրենիք վերադարձնել մինչև Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը Ռուսաստանում գտնվող բոլոր զինվորական և քաղաքացիական գերի թուրքերին»: Իսկ Թուրքիան նույն պարտավորությունը ստանձնում էր «միայն դեռևս Թուրքիայում գտնվող ռուս զինվորական և քաղաքացիական գերիների վերաբերմամբ»⁴⁴:

Ըստ պայմանագրի նույն հոգվածի, Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը որոշելիս կողմերը համաձայնեցին, որպեսզի այն անցնի Արփաչայ (Ախուրյան) և Արաքս գետերի հունով սահմանի թուրքական կողմում թողնելով Կարսի մարզը ու Սուրմալուի գավառը⁴⁵: Փաստորեն, առանց հայ ժողովրդի կամքը հարցնելու Թուրքիային զիջվում էին նաև այն տարածքներ

⁴¹ Տե՛ս Հ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 280, Վ. Ղազախեցյան. Հայաստանը 1920–1940 թթ., էջ 96:

⁴² Հ. Հակոբյան. նշվ. աշխ., էջ 295:

⁴³ Նույն տեղում, էջ 299:

⁴⁴ Նույն տեղում, էջ 299–300:

⁴⁵ Տե՛ս Документы внешней политики СССР, т. III, док. № 342, с. 598. Մոսկվայի պայմանագրում թուրք-հայկական սահմանագծի մանրամասն նկարագրությունը և դրան վերաբերող հարցերի պարզաբանումները տե՛ս պայմանագրի 1 (A) և 1 (B) հավելվածներում ու Պայմանավորվող պետությունների կողմից ստորագրված առդիր քարտեզի վրա:

րը, որոնց մի մասը 1920 թ. Թուրք-Հայկական պատերազմում նա զավթել էր Հայաստանի Հանրապետությունից, իսկ մյուս մասին էլ տիրացել ուժի սպառնալիքի միջոցով: Նշենք, որ Սուրմալուի գավառը Մեծ և Փոքր Արարատ լեռներով անցավ Թուրքիային Բաթումը Վրաստանին հանձնելու փոխարեն: Թուրքական պատվիրակությունն պնդում էր՝ «Թյուրիմացություններից խուսափելու» նպատակով պայմանագրի Ցրդ հոգվածում ավելացվեց հետևյալ պարբերությունը. «Համարվում է որոշված, որ սույն հոգվածում հիշատակված Թուրքական տարածքի անվան տակ հասկացվում է այն տարածքը, որը գտնվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունից զինվորական և քաղաքացիական անմիջական կառավարման ներքո»⁴⁶: Պատմաբաններ Կարեն Խաչատրյանը, Համո Սուքիասյանը և Գեղամ Բաղալյանը նշում են, որ 1918–1920 թթ. ՀՀ ստորագրած ոչ մի միջպետական պայմանագրով չէին որոշվել նրա ամբողջական տարածքներն ու սահմանագիծը: Եվ միայն 1920 թ. նոյեմբերի 22-ին, երբ Հայաստանը պարտություն էր կրում Թուրք-Հայկական պատերազմում, Վ. Վիլսոնն իր իրավարար վճռով որոշեց Հայ-Թուրքական սահմանագիծը⁴⁷: Պատահական չէ, որ Խորհրդային Հայաստանը ժառանգեց անորոշ պետական սահմաններ և տարածքային-սահմանային չլուծված խնդիրներ սահմանակից քեմալական Թուրքիայի, Ադրբեջանական ՍՍՀ-ի ու Վրացական Հանրապետությունից հետ: Նկատի ունենալով խորհրդայնացման ազդեցությունը Հայաստանի փաստացի իրավական կարգավիճակի վրա՝ հեղինակները նշում են, որ դրա հետևանքով քեմալական Թուրքիայի բռնազավթած Հայկական տարածքների պատկանելության հարցը ստորադասվեց խորհրդա-Թուրքական տարածքային սահմանադատման խնդրին՝ չնայած Հայաստանի խորհրդային իշխանությունների վճռականությունը Հայկական տարածքների ու սահմանների խնդիրը հօգուտ Հանրապետության լուծելու հարցում: Հանգամանորեն ուսումնասիրելով Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանագծման հնարավոր չորս տարբերակների վերաբերյալ փաստաթղթերը՝ Կ. Խաչատրյանը, Հ. Սուքիասյանը և Գ. Բաղալյանը նշում են, որ Հայկական կողմի հավակնություններն Ախուրյան և Արաքս գետերից արևմուտք, մասամբ հարավ ընկած չուրջ 60 հազ. կմ² տարածքների, այդ թվում՝ Կարսի մարզի, Արդահանի օկրուգի որոշ հատվածների, Բայազետի նկատմամբ հիմնավորված էին ոչ միայն դրանց պատկանելությամբ ՀՀ-ին Թուրք-Հայկական պատերազմի նախօրյակի դրությամբ, այլև՝ Հայաստանի բնականոն զարգացման շահով և Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրված համաձայնագրի 3-րդ կետի պայմաններով⁴⁸: Մինչդեռ ռուս-թուրքական «դավադիր գործարքով» Հայաստանից խլվեց և Թուրքիային ու Ադրբեջանին նվիրաբերվեց Հայկական տարածքների մի զգալի մասը, խախտվեցին ու ոտնահարվեցին միջազգային իրավունքի

⁴⁶ Նույն տեղում, էջ 600:

⁴⁷ *Տե՛ս* Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson. Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia, Washington, November 22nd, 1920. Prepared with an introduction by A. Papian. Yerevan, 2011, pp. 1–243.

⁴⁸ *Տե՛ս* Կ. Խաչատրյան, Հ. Սուքիասյան, Գ. Բաղալյան. *Նշվ. աշխ.*, էջ 44–45:

Հիմնարար սկզբունքները: Ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Թուրքիան առանց Հայաստանի մասնակցության որևէ իրավասություն չունենին տնօրինելու հայկական տարածքների և հայության ճակատագիրը: Հետևաբար, Հայաստանի տարածքային հարցերին վերաբերող պայմանագրի կետերը չեն կարող առաջացնել իրավական որևէ պարտավորություն Հայաստանի համար: Հարկ է նկատել, որ Կ. Խաչատրյանը դեռևս 2007 թ. լույս ընծայած մենագրության մեջ Մոսկվայի պայմանագիրը դրա 1-ին հոդվածի առնչությամբ իրավացիորեն զնահատել է որպես Հայաստանի բաժանում բոլշևիկյան Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի միջև⁴⁹:

Ըստ Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածի, Նախիջևանի մարզը հավելվածի 1 (C) մասում նշված սահմաններում դառնում էր ինքնավար տարածք Ադրբեջանի խնամակալության ներքո պայմանով, որ այդ խնամակալությունը չզիջվի մի երրորդ պետության: Հասկանալի է, որ որպես «երրորդ պետություն» նկատի էր առնվում Հայաստանը: Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի պատվիրակներից կազմված միացյալ հանձնաժողովը կատարելու էր շտկում Նախիջևանի ու Հայաստանի սահմանի մի հատվածում⁵⁰: Այս առնչությամբ Գ. Գալոյանը նկատում է չնայած խորհրդային կառավարության արտաքին քաղաքականության փաստաթղթերում միանշանակ ընդունվում էր Նախիջևանի՝ Հայաստանի անքակտելի մասը լինելու փաստը, սակայն 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ Հայաստանում իշխանության եկած ՀՓԿ-ն, ունենալով հակախորհրդային կողմնորոշում, մտադիր էր հայ-թուրքական հարաբերություններում հիմք ընդունել Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Դա նշանակում էր քեմալական Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին հնարավորություն տալ անմիջականորեն կապվելու միմյանց հետ Նախիջևանի միջոցով, ինչն անցանկալի էր Խորհրդային Ռուսաստանի համար: 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի 3-րդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը հասավ Նախիջևանի նկատմամբ Թուրքիայի պետական իշխանության դադարեցմանը և վերականգնման անհնարինությանը միջազգային-իրավական տեսանկյունից⁵¹: Ավելին, շուտով Մոսկվայի կառավարության ջանքերով Կարսի պայմանագրից էլ հանվեց Նախիջևանը «մի երրորդ պետության» գիջելու պայմանը: «Այդ գիջումների դիմաց, — ինչպես հետագայում հայտարարեց Կարսի կոնֆերանսում թուրքական պատվիրակության անդամ Մուխթար բեյը, — մենք Կարսի կոնֆերանսում ստացանք մեզ համար կարևոր իրավունքներ՝ Նախիջևանի շրջանից հարավ ընկնող տարածքները Թուրքիային միացնելու և եղբայրական Ադրբեջանի հետ անմիջական կապ ունենալու համար»⁵²: Նշենք, որ թե՛ ռուս-թուրքական բանակցություններում և թե՛ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ու հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերում որևէ ձևակերպում չի արվել Ադրբեջանի կազմում Նախիջևանին ինքնավար հանրապետության կարգավիճակ տալու մասին: Երկրամասը

⁴⁹ Տե՛ս Կ. Հ. Խաչատրյան. Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., էջ 142:

⁵⁰ Տե՛ս Документы внешней политики СССР, т. III, док. № 342, с. 598–599.

⁵¹ Տե՛ս Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 447:

⁵² Կ. Խաչատրյան, Հ. Սուքիասյան, Գ. Բադալյան. նշվ. աշխ., էջ 50:

լինելու էր ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո: Սակայն դա երկար չտևեց. 1924 թ. փետրվարի 9-ին կուսակցական որոշումների հիման վրա Նախիջևանին տրվեց ինքնավար հանրապետության կարգավիճակ՝ Ադրբեջանի կազմում⁵³: Ի դեպ, Մոսկվայի ու Կարսի պայմանագրերի դրույթների բազմաթիվ խախտումներից սա ամենամեծն է, և այն գործել է Ադրբեջանը:

Պայմանագրի 6-րդ հոդվածով Պայմանավորվող կողմերն ընդունում էին, որ նախկինում երկու երկրների միջև կնքված բոլոր պայմանագրերը չեն համապատասխանում փոխադարձ շահերին: Ուստի նրանք համաձայն էին այդ պայմանագրերը համարել վերացված և ուժը կորցրած: Ավելին, ՌՍՖՍՀ կառավարությունը Թուրքիային համարում էր ազատ՝ նախկինում ցարական կառավարության հետ կնքած միջազգային ակտերի վրա հիմնված դրամական կամ որևէ այլ պարտավորությունից⁵⁴: Այդպիսով Թուրքիան նաև ազատվում էր ապագայում Արևմտյան Հայաստանում բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի վերականգնման հնարավոր սպառնալիքից:

Պայմանավորվող կողմերը պարտավորվում էին արգելել իրենց սահմաններում և Անդրկովկասի խորհրդային հանրապետություններում այնպիսի կազմակերպությունների ու խմբերի գոյությունը, որոնք կհավակնեին կառավարության դեր ստանձնել կամ պայքար մղել մյուս երկրի դեմ: Սա նշանակում էր ՀԶԴ և ազգային այլ կուսակցությունների գոյության ու գործունեության արգելում Հայաստանում, քանի որ վերջիններս կարող էին հանդես գալ հայ ժողովրդի ազգային շահերի պաշտպանության, հողային պահանջատիրության:

1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը կնքելիս թուրքական կառավարությունը կասկածում էր, որ Հայաստանի խորհրդային հանրապետությունը ռուս-թուրքական խորհրդաժողովին չմասնակցելու հիմնավոր պատճառաբանությամբ կարող էր չընդունել իրեն վերաբերող հոդվածները: Դա կանխելու հեռահար նպատակով թուրքական կողմը պնդեց՝ պայմանագրում ավելացնել հոդված, ըստ որի Ռուսաստանի կառավարությունը պարտավորվում էր դիմել քայլերի, որպեսզի Անդրկովկասի հանրապետությունները Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում անպատճառ ճանաչեն ռուս-թուրքական պայմանագրի իրենց վերաբերող հոդվածները: Ռուսական կողմն ընդունեց առաջարկը. պայմանագրում այն ձևակերպվեց որպես 15-րդ հոդված⁵⁵: Այդպիսով Մոսկվայի պայմանագրով Հայաստանին պարտադրված պայմանների կատարման համար Թուրքիային տրվեց միջազգային-իրավական որոշակի երաշխիք: Եվ սա այն դեպքում, երբ միջազգային իրավունքում «գոյություն ունի այլ պետությունների միջև կնքված իրավաչափ պայմանագրերը հարգելու և ճանաչելու պարտականություն, եթե դրանք չեն խախտում երրորդ պետությունների իրավունքները: Եթե պետությունը համարում է, որ այլ պետությունների միջև կնքված պայմա-

⁵³ Сб'у Документы внешней политики СССР, т. III, док. № 342, с. 598–599, т. IV (19 марта – 31 декабря 1921). М., 1960, док. № 264, с. 423.

⁵⁴ Сб'у Документы внешней политики СССР, т. III, док. № 342, с. 599.

⁵⁵ Сб'у նույն տեղում, էջ 602:

նագիրն առնչվում է իր շահերին, ապա կարող է հայտարարել այն չճանաչելու մասին և այդ դեպքում իրավասու կլինի գործել այնպես, ինչպես պայմանագրի չգոյություն ժամանակ»⁵⁶:

Ահա այս բովանդակությամբ մարտի 16-ի պայմանագիրը ստորագրել են՝ ՌՍՖՍՀ կառավարության անունից՝ արտգործոց Պետրոս Զիզերինը և Համառուսաստանյան Կենտրոնական անդամ Զելալ-էդ-Դին Կորկմասովը, իսկ ԹԱՄԺ կառավարության անունից՝ տնտեսության նախարար Յուսուֆ Քեմալը, լուսավորության նախարար Ռիզա Նուր բեյն ու Ռուսաստանում Թուրքիայի լիազոր դեսպան Ալի Ֆուադ փաշան (Ջեքեսոյ):

Մոսկվայի պայմանագրի գործողությունը սահմանափակված է ժամկետով: Պայմանագրի պաշտոնական տեքստը կազմվել է ֆրանսերեն: Դրա ռուսերեն թարգմանությունը պայմանագրի կնքումից կարճ ժամանակ անց հրատարակվել է առանձին գրքուկով:

Խորհրդային կառավարությունը վավերացրել է պայմանագիրը 1921 թ. հուլիսի 20-ին, իսկ Թուրքիայի Ազգային ժողովը՝ հուլիսի 31-ին: Անդրկովկասի հանրապետությունների կառավարությունները մեծ ուշացումով մարտի 31-ին Մոսկվայից ստացան ռուս-թուրքական պայմանագրով որոշված սահմանների քարտեզը: Պայմանագրի վավերացումից հետո Ռուսաստանը և Թուրքիան առանց պարզելու, թե Մոսկվայի պայմանագրի ո՞ր դրույթներն են անընդունելի Անդրկովկասի հանրապետությունների համար, սեպտեմբերի 22-ին Կարսում փոխանակեցին վավերագրերը: Այնուհետև Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանին ու մյուս հանրապետություններին վերաբերող հոդվածները չնչին տարբերությամբ իրենց վերահաստատումը գտան 1921 թ. հոկտեմբերի 13-ին Թուրքիայի և անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների միջև ստորագրված Կարսի պայմանագրում:

Մոսկվայի պայմանագրի պատմագիտական գնահատականը

Հ. Ավետիսյանի գնահատմամբ, 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը ոչ թե բոլշևիկյան Ռուսաստանի, այլ քեմալական Թուրքիայի դիվանագիտական խոշոր հաղթանակն էր: Առաջին համաշխարհային պատերազմից դուրս գալով որպես պարտված պետություն՝ Թուրքիան կարողացավ հասնել Սևրի պայմանագրի սառեցմանը, տեղադրվել նախկինում իրեն չպատկանած, բայց Հայաստանի հանրապետությունից զավթած ընդարձակ տարածքներին՝ Կարսի մարզին, Սուրմալուի և Օլթիի գավառներին, Արդահանին, Սարիղամիշին, Կադզվանին, Իգդիրին ու այլ տարածքներին: Դրանով Հայաստանին հասցվեց տնտեսական մեծ վնաս. երկիրը զրկվեց վառելիքի, հացահատիկի, աղի և օգտակար այլ հանածոներով հարուստ կենսական շրջաններից, սպառնալիքի տակ դրվեց Հայաստանի անվտանգությունը, անհնար դարձավ հայ զաղթականության տունդարձի կազմակերպումը: Արևմտյան Հայաստանի գոյության մասին խոսք անգամ չեղավ: Ռուսաստանը հեշտորեն Թուրքիային հանձնեց հայկական տարածքները,

⁵⁶ Տե՛ս Վ. Քոչարյան. Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002, էջ 114:

որոնք նվաճելու համար XIX դարում երկարատև ու դժվարին պայքար էր մղել Պարսկաստանի և Թուրքիայի դեմ կրելով մարդկային ու նյութական հսկայական կորուստներ: Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ թուրքական ռազմական ուժի և դիվանագիտության փոխկապակցված ու տրամաբանական հաջորդականություն իրականացրած քայլերի շարքում Մոսկվայի պայմանագիրը հերթականն էր՝ նպատակաուղղված Հայկական հարցի վերջնական լուծմանը թուրքական տարբերակով, այսինքն՝ Հայաստանը, իբրև համաթուրանական պլաններն արգելակող պատվար, վերացնելուն: Պայմանագրով թուրքերը նաև հասան Ադրբեջանի օգտին Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի և Արցախի բռնակցմանը՝ Հայաստանին զրկելով Զանգեզուրի հետ լիարժեք կապի հնարավորությունից: Զուգահեռաբար չրջանառության մեջ դրվեց արևմտահայկական տարածքների ու Կարսի մարզի՝ ի սկզբանե թուրանական լինելու թեզը: Թուրանական ցեղեր համարվեցին մինչև անգամ Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ բիայնացիները, դրանով իսկ բացառվեց հայերի իրավունքն այդ տարածքի նկատմամբ, «վերացվեց» Հայկական հարցը: Սկիզբ դրվեց բռնազավթված և դրանց կից հայկական տարածքների վրա թուրքերի «իրավունքները» տարածելու քաղաքականությունն ու քարոզչությունը⁵⁷:

Մոսկվայի պայմանագիրը գնահատելով որպես թուրքական դիվանագիտության և, մասնավորապես, թուրքական պատվիրակության հաղթանակը՝ Վ. Ղազախեցյանը միևնույն ժամանակ նշում է, որ Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի արդյունքներում բացասական դեր են ունեցել ներքին ու արտաքին մի քանի գործոններ՝ Թուրքիայի հաղթանակը Հայաստանի առաջին հանրապետության դեմ պատերազմում և 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի թուրք-հայկական հաշտության պայմանագիրը, հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանի գլխավորած ՀՓԿ-ի Մոսկվա՝ խորհրդային Հայաստանի դեմ ուղղված դիմումները, ինչպես նաև Ռուսաստանի պարտությունը Լեհաստանի դեմ պատերազմում: Նրա կարծիքով, Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո Թուրքիան հույս ուներ Հայաստանի հետ կնքել առանձին՝ ավելի ծանր պայմանագիր, որով կվերադառնար Ալեքսանդրապոլի հաշտությանը ամրագրված պայմաններին: Սակայն իրադարձությունները չընթացան Թուրքիային ցանկալի հունով: Նախ՝ ՀՓԿ-ն պարտվեց Հայաստանի խորհրդային իշխանության դեմ պայքարում, ապա՝ խորհրդային Ռուսաստանը վճռական ու հետևողական գտնվեց Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը քեմալական զորքից 1921 թ. ապրիլի 22-ին մաքրելու հարցում: Վ. Ղազախեցյանը հիմնավորում է, որ Թուրքիայի հետ Անդրկովկասի հանրապետությունների Ռուսաստանի մասնակցությամբ Կարսի կոնֆերանսին Հայաստանի մասնակցության հարցը լուծվել է ՌՍՖՍՀ համառ պայքարի արդյունքում: Դրա շնորհիվ է ձախողվել Հայաստանը դիվանագիտորեն մեկուսացնելու և նրա հետ հարցերն առանձին լուծելու թուրքական պլանը⁵⁸:

⁵⁷ Հ. Ավետիսյան. նշվ. աշխ., էջ 358:

⁵⁸ Տե՛ս Վ. Ղազախեցյան. Հայաստանը 1920–1940 թթ., էջ 102–103:

Քննական վերլուծության ենթարկելով հայ ժողովրդի՝ Հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը՝ Հ. Հակոբյանը թվարկում է հինգ պատճառ, որոնցով Մոսկվայի պայմանագիրը հակասում է միջազգային իրավունքին և, իբրև ապօրինի գործարքի արդյունք, պետք է չեղյալ հայտարարվի: Մասնավորապես, նշվում է պայմանագրի ստորագրումն առանց Հայաստանի մասնակցության այն դեպքում, երբ Խորհրդային Հայաստանի պատվիրակությունն Ա. Բեկզադյանի գլխավորությամբ գտնվում էր Մոսկվայում: Սակայն նրան թույլ չտվեցին մասնակցել ո՛չ կոնֆերանսին և ո՛չ էլ բանակցություններին ու պայմանագրի ստորագրմանը, թեև տարածքային զիջումները Թուրքիային կատարվում էին Հայաստանի հաշվին⁵⁹: Այնուհետև Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն ինքնակամ հրաժարվել էր Ռուսական կայսրության ազգային ծայրամասերի նկատմամբ իշխանությունից: Ավելին, Ռուսական կայսրությունն այլևս գոյություն չուներ և նախկինում նրա մասը կազմող Արևելյան Հայաստանն էլ *de jure*՝ իրավականորեն, անկախ, ինքնիշխան խորհրդային հանրապետություն էր: Հետևաբար, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն իրավունք չուներ մեկ այլ ինքնիշխան պետության տարածքները տնօրինել՝ իբրև Ռուսական կայսրության ծայրագավառի և, առանց այդ պետության համաձայնության, հանձնել նրա իշխանության ներքո գտնվող տարածքները մեկ այլ պետության՝ Թուրքիային⁶⁰: Ապա, Հ. Հակոբյանը շեշտում է, որ իր արտաքին քաղաքական առաջին փաստաթղթում «Հաշտության մասին» հրովարտակում, Ռուսաստանի խորհրդային կառավարությունը սկզբունքորեն դատապարտել էր անեքսիան՝ այն բնութագրելով ոչ միայն իբրև օտարի տարածքի զավթում, այլև որևէ ազգի՝ հակառակ նրա ազատորեն արտահայտված կամքի, բռնությամբ այլ պետության կազմի մեջ պահում, այսինքն՝ ինքնորոշման իրավունքի ոտնահարում: Հետևաբար, Մոսկվայի պայմանագրով Թուրքիայի տարածք ճանաչելով Կարսն ու Արդահանը, ինչպես նաև Սուրմալուն, որը պատմականորեն երբեք չէր եղել Թուրքական տիրույթ և 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի ռուս-պարսկական հաշտության պայմանագրով Պարսկաստանից անցել էր Ռուսաստանին, խորհրդային կառավարությունը ճանաչում էր Թուրքական զավթումները՝ մերժելով իր իսկ ընդունած սկզբունքը զավթումների վերաբերյալ⁶¹: Հ. Հակոբյանի գնահատմամբ ևս, Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը հակասում է միջազգային իրավունքին, քանի որ «... Ռուսաստանը պարտավորվում էր ճնշման և ահաբեկման միջոցով ստիպել Անդրկովկասի ինքնիշխան պետություններին ճանաչել ու վավերացնել Թուրքիայի հետ իր ապօրինի գործարքը: Իսկ ճնշման և սպառնալիքի ներքո ընդունված պայմանագրերը միջազգային իրավունքի տեսանկյունից չեն կարող համարվել օրինական ուժ ունեցող»⁶²: Սա հիմք է՝ պայմանագիրը չեղյալ հայտարարելու համար:

Անդրադառնալով Մոսկվայի պայմանագիրը ստորագրած կողմերի իրավական կարգավիճակին՝ Ա. Պապյանը և Ա. Հակոբյանը նշում են, որ պայ-

⁵⁹ Տե՛ս Հ. Հակոբյան. *նշվ. աշխ.*, էջ 302:

⁶⁰ Տե՛ս նույն տեղում:

⁶¹ Տե՛ս նույն տեղում, էջ 302–303:

⁶² Տե՛ս նույն տեղում, էջ 303:

մանագրի կնքման պահին ՌՍՖՍՀ-ն միջազգայնորեն ճանաչված չէր աշխարհի որևէ պետության՝ օրինականորեն ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից (առաջինը Մեծ Բրիտանիան է, որը 1924 թ. փետրվարի 1-ին ճանաչել է ՌՍՖՍՀ իրավահաջորդ ՍՍՀՄ-ին)։ Ճանաչված չէր նաև Թուրքիայի քեմալական կառավարությունը։ Բացի այն, որ վերջինս միջազգային պայմանագրերը կնքում էր ոչ թե իր, այլ ԹԱՄԺ-ի անունից, նրան վերագրելով անօրինական իրավասություն, կառավարության ղեկավար Մ. Քեմալն էլ երկրի անօրինական իշխանության՝ սուլթան-խալիֆի դեմ ապստամբած և Մուղրոսի զինադադարը ոտնահարող, փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ էր, որը կայսրության բարձրագույն կրոնավորի՝ շեյխ-ուլ-իսլամի 1920 թ. ապրիլի 11-ի հրամանով մահվան էր դատապարտվել⁶³։ Ա. Պապյանի գնահատմամբ, միջազգային իրավունքի խախտում է նաև Մոսկվայի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասը, քանի որ վերջինս չի մասնակցել դրա ստորագրմանը։ Հետևաբար, Մոսկվայի պայմանագիրը որևէ պարտավորություն կամ իրավունք չի ստեղծում դրան մաս չկազմող երրորդ կողմի համար առանց նրա համաձայնության։ Որպես այդպիսին, պայմանագիրն անօրինական է ու անվավեր⁶⁴։ Հիմք ընդունելով վերը ներկայացված փաստերն ու հիմնավորումները՝ պատմաբաններ Ա. Մելքոնյանը, Ա. Մարուքյանը և Ա. Պապյանը նշում են, որ Մոսկվայի պայմանագրով որոշված Ախուրյան ու Արաքս գետերով անցնող խորհրդա-թուրքական սահմանի հայաստանյան հատվածը լոկալ բաժանարար գիծ է։ Այն չունի հայ-թուրքական պետական սահմանի կարգավիճակ, քանի որ չկա դրա վերաբերյալ օրինականորեն ուժի մեջ մտած և գործող միջազգային որևէ պայմանագիր։ Նրանք շեշտում են, որ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև գոյություն ունեցող միակ de jure սահմանը վիստոյանն է, իսկ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի ու Կարսի անօրինական պայմանագրերը չեն կարող օրինական սահմանի հիմք լինել⁶⁵։

⁶³ Տե՛ս Ա. Պապյան. Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները. — Հայրենատիրություն, էջ 25–26, Ա. Մ. Հակոբյան. Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, էջ 216–217։

⁶⁴ Տե՛ս Ա. Պապյան. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի (16 մարտի, 1921) փորձաքննությունը՝ ըստ միջազգային իրավունքի. — Հայրենատիրություն, էջ 39։

⁶⁵ Տե՛ս Ա. Մելքոնյան. ՀՀ Ազգային ժողովում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի ելույթը հայ-թուրքական արձանագրությունների կապակցությամբ (2009 թ. հոկտեմբեր). — Ցեղասպանություն և հայրենագրվում։ Ճանաչումից՝ հատուցում (հոգվածներ և հարցազրույցներ), էջ 274–278, ն ու յ ն ի՝ Հայոց պատմության դասերն ու պատգամները, էջ 482, 486–487, Ա. Մարուքյան. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, էջ 106–111, ն ու յ ն ի՝ Թուրքիայի միջազգային-իրավական պատասխանատվության հիմնախնդիրը։ Ամփոփում և առաջարկներ. — «Վէմ» համահայկական հանդես, 2010, թիվ 1, էջ 11–28, Ա. Պապյան. Հայոց պետականության զաղափարական հիմքը. — Հայրենատիրություն, էջ 157, ն ու յ ն ի՝ Նախկին սովետական հանրապետությունների ճանաչման, ինքնորոշման և սահմանների մասին. — նույն տեղում, էջ 83–86։

Ձնայած Հայաստանին վերաբերող հողմածների մասով անօրինական լինելու իրողությունը՝ Մոսկվայի պայմանագիրը հիմք է հանդիսացել Լեոնային Ղարաբաղը Հայաստանից խլելու ու Ադրբեջանին բռնակցելու համար: Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ գործված անարդարությունը վերացնելու փոխարեն, 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հինգ անդամների վճռով «Արևելքում խորհրդային իշխանության առաջապահիկ» Ադրբեջանին մատուցվեց Լեոնային Ղարաբաղը⁶⁶:

Եզրակացություն

Հայաստանի ղեկավարները Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո միայն դժգոհության ձայն բարձրացրին ռուս-թուրքական կոնֆերանսում հայկական շահերի անտեսման կապակցությամբ: 1921 թ. ապրիլի 15-ին ՀՍՍՀ պատվիրակությունը բողոքի հուշագիր ուղղեց ՌԿ(Բ)Կ Կենտկոմին ու խորհրդային պետության ղեկավար Վ. Լենինին: Դրանում մասնավորապես նշված էր. «Կոնֆերանսի արձանագրություններից չի երևում, թե արվել է գոնե մի չնչին փորձ՝ պահպանելու այն հոգերն ու շրջանները, որոնք կենսական նշանակություն ունեն երիտասարդ և փոքր խորհրդային Հայաստանի համար»⁶⁷: Սակայն խորհրդային Հայաստանին պարտադրված փոփոխությունն անհեռանկար համաշխարհային հեղափոխության գաղափարախոսության պայմաններում հանրապետության ղեկավարությունը պրոլետարական ինտերնացիոնալիստականից բացի այլ կեցվածք չէր կարող որդեգրել: Հայաստանյան իշխանությունների կողմից հայկական ազգային շահերին հետամուտ լինելը կենտրոնի խորհրդային Ռուսաստանի կառավարության կողմից կարող էր որակվել որպես ազգայնականություն՝ նացիոնալիզմ: Հետագայում ևս խորհրդային Հայաստանի իշխանություններն առիթը բաց չէին թողնում իրենց դժգոհությունը հայտնելու համար: Կարսի պայմանագրի տակ իր ստորագրությունը դրած ՀՍՍՀ արտգործոց Կոմ Ասքանազ Մուսկյանը նշել է. «Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»⁶⁸: Ճիշտ է, 1921 թ. «կորցրած հողերի» վերադարձման հարցը խորհրդային կառավարությունն առաջ քաշեց Պոտսդամի միջազգային խորհրդաժողովի օրերին՝ 1945 թ. հուլիսին, սակայն 1953 թ. մայիսի 30-ին Մոսկվան Հայաստանի ու Վրաստանի անունից հրաժարվեց Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջներից՝ «բարիդրացիական հարաբերությունները պահպանելու և անվտանգությունն ու խաղաղությունը ամրապնդելու համար»⁶⁹:

Բացի այդ, որոշակի հակասություն է առկա Մոսկվայի պայմանագրում «ազգերի եղբայրության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներին» Թուրքիայի ու Ռուսաստանի հավատարմության վերաբերյալ ձևակերպման

⁶⁶ Հ. Ավետիսյան. նշվ. աշխ., էջ 358:

⁶⁷ Նույն տեղում, էջ 355, Կ. Խաչատրյան, Հ. Սուքիասյան, Գ. Բադալյան. նշվ. աշխ., էջ 46:

⁶⁸ Կ. Խաչատրյան, Հ. Սուքիասյան, Գ. Բադալյան. նշվ. աշխ., էջ 50–51:

⁶⁹ Նույն տեղում:

և պայմանագրի 3-րդ, 15-րդ հոդվածների ու հավելվածի 1 (A), 1 (B) մասերի միջև: Այսպես, Ռ. Ղազանչյանը, վկայակոչելով ռուսական արտաքին քաղաքականության գերմանաֆիտական վավերագրերը, նշում է, որ դեռևս 1921 թ. մարտին, երբ ընթանում էին ռուս-թուրքական բանակցությունները, խորհրդային կառավարությունում, հայկական տարածքները թուրքիային գիջելով հանդերձ, չէին բացառում ռուսական զորքերի հարձակման հնարավորությունն ինչպես Կարսի, այնպես էլ Օլթիի և էրզրումի ուղղությամբ⁷⁰: Բացի այդ, թուրքիայի կողմից էապես խախտվել և խախտվում են Հայաստանի ու թուրքիայի միջև երկաթուղով, հեռագրով և այլ միջոցներով անխափան հաղորդակցություն, ինչպես նաև մարդկանց ու բեռների՝ առանց ձգձգման փոխադրում ապահովելու վերաբերյալ Մոսկվայի պայմանագրի 9-րդ և Կարսի պայմանագրի 13-րդ հոդվածները: Ավելին, խնդրո առարկա պայմանագրի կնքումից հետո անցած հարյուրամյակի ընթացքում թուրքիայի կառավարությունը նաև խախտել է հավելվածի 1 (B) մասում ամրագրված իր պարտավորությունը թուրքական բլոկհատվածների (ամրոցների) գիծը Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղու՝ Արփաչայի շրջանում նրա առկա ուրվագծից ութ և Արաքսի շրջանում վերոհիշյալ երկաթուղուց չորս վերստ (1 վերստը 1066,9 մետր է) հեռավորության վրա տեղակայելու վերաբերյալ. դրանք աստիճանաբար մոտեցվել են թուրք-հայկական պետական սահմանագծին: Ի հավելումն նշվածի, պատմաբաններ Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը Մոսկվայի պայմանագրի խախտում են համարում նաև 1994 թ. թուրքիայի ու Ադրբեջանի միջև կնքված բարեկամության և համագործակցության ուխտը, որն ունի հակահայկական ուղղվածություն⁷¹:

Ներկայումս թուրքիան Մերձավոր Արևելքի վերաձևման համար հետաառադատերազմյան ժամանակաշրջանում շարունակվող պայքարի գլխավոր ակտորներից է: Այդ պայքարի առանցքային գործողությունը Հայաստանն իբրև պետություն վերացնելն ու այդպիսով Հայոց պահանջատիրությունից վերջնականորեն ազատվելն է: 2020 թ. Արցախի Հանրապետության տարածքի 75 %-ը բռնազավթելուց հետո թուրքիան և Ադրբեջանը նպատակադրվել ու հետևողական գործողություններով Հայկական հարցի լուծումը տեղափոխում են Հայաստանի Հանրապետության տարածք: Եվ սա այն դեպքում, երբ Արցախի չօկուպացված հատվածում տեղակայված են ռուսական խաղաղապահները, իսկ Ռուսաստանի Դաշնությունը և Հայաստանի Հանրապետությունը ռազմավարական դաշնակիցներ են: Այս պայմաններում ՀՀ-ն նախևառաջ պարտավոր է պատրաստ լինել դիմադրավելու թուրք-ադրբեջանական վերահաս ռազմական փտանգը, պաշտպանելու իր և ողջ Հայ ժողովրդի օրինական շահերն ու իրավունքները միջազգային իրավունքի ընձեռած հնարավորություններով, կանխելու փաստացիորեն Մոսկվայի պայմանագրով կարգավորվող թուրք-հայկական բաժա-

⁷⁰ См. Р. К а з а н д ж я н. К вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921 г., с. 109.

⁷¹ См. Ստ. Պողոսյան, Կ. Պողոսյան. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, հ. III (Հայկական հարցը 1920–1922 թվերին), գիրք II, Երևան, 2003, էջ 447–449:

նարար գծի վերանայումն ի վնաս հայ ժողովրդի ու հայկական պետականության:

Լիլիթ Յովհաննիսյան – պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայոց ցեղասպանության և Հայկական հարցի պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ու պատմագրության հարցեր: Հեղինակ է 2 մենագրության, 5 գիտամեթոդական ձեռնարկի և շուրջ 40 հոդվածի: lilithovannisian@yahoo.com

REFERENCES

- Alikhanyan S. Sovetakan Rusastani dere hay zhoghovrdi azatagrmn gordsum (1917–1921 tt.), Yerevan, 1966 (In Armenian).
- Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson. Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary Between Turkey and Armenia, Washington, November 22nd, 1920. Prepared with an introduction by A. Papian. Yerevan, 2011.
- Arzumanyan M. V. Arhavirkits veradsnund, Yerevan, 1973 (In Armenian).
- Avagyan A. Turkiayi` vorpes mahmedakanneri hovanavori, dirkoroshume Moskvayi konferansi entatskum. – “Nakhidjevani himnahartse Moskvayi 1921 t. marti 16-i rus-turkakan paymanagrum” (gitazhoghovi nyuter), Yerevan, 2001 (In Armenian).
- Avetisyan H. Haykakan hartse 1918 tvakanin, Yerevan, 1997 (In Armenian).
- Bor’yan B. A. Armeniya, mezhdunarodnaya diplomatiya i SSSR, ch. II. M.–L., 1929 (In Russian).
- Dokumenty vneshney politiki SSSR, t. III (1 iyulya 1920 g. – 18 marta 1921 g.). M., 1959; t. IV (19 marta – 31 dekabrya 1921 g.). M., 1960 (In Russian).
- Esayan A. Hayastani midjazgayin iravakan drutyune (1920–1922), Yerevan, 1967 (In Armenian).
- Galoyan G. A. Patmutyan karughinerum: Azatagrvads zhoghovrdi veradsnunde, Yerevan, 1982 (In Armenian).
- Galoyan G. Hayastane yev meds terutyunnere 1917–1923 tt., Yerevan, 1999 (In Armenian).
- Genotsid armyan: otvetstvennost’ Turtsii i obyazatel’sstva mirovogo soobshchestva. Dokumenty i kommentariy. Sost., otv. red., avtor pred. i comment. Yu. G. Barsegov, t. 2, ch. 1. M., 2003 (In Russian).
- Ghazaryan H. M. Moskvayi yev Karsi 1921 t. paymanagrern u nrants voghbergakan dere hay zhoghovrdi jakatagrum, Yerevan, 2010 (In Armenian).
- Ghazakhetsyan V. Hayastane 1920–1940 tt., Yerevan, 2006 (In Armenian).
- Ghazakhetsyan V. Moskvayi rus-turkakan konferanse: 1921 t. marti 16-i paymanagire.– Hayots patmutyun, h. IV, girk I [Noraguyn zhamanakashrdjan (1918–1945 tt.)], Yerevan, 2010 (In Armenian).
- Hakobyan A. M. Khorhrdayin Hayastane Moskvayi yev Karsi paymanagrern, Yerevan, 2010 (In Armenian).
- Hakobyan H. Taragir hayutyan hayrenik veradarnalu pahandji patmakan u iravakan himkere, Yerevan, 2002 (In Armenian).
- Hayastane midjazgayin divanagitutyan yev sovetakan artakin kaghakakanutyan pastatgherum (1828–1923), khmb. J. S. Kirakosyan, Yerevan, 1972 (In Armenian).

- Hayastani azgayin atlas, pat. khmb. B. Harutyunyan, h. B, Yerevan, 2008 (In Armenian).
- Hayastani azgayin arkhiv, f. 113, ts. 3, g. 56, t. 32–40 (In Armenian).
- “Hayastani Hanrapetutyun” (Yerevan), 16. III. 1991 (In Armenian).
- Hayastani Hanrapetutyune 1918–1920 tt. (kaghakakan patmutyun), pastatgheri yev nyuteri zhoghovatsu, kazm.՝ G. Galoyan, V. Ghazakhetsyan, V. Melikyan, S. Mirzoyan, A. Virabyan, Yerevan, 2000 (In Armenian).
- “Hayastani komunist” (Yerevan), 11. X. 1988 (In Armenian).
- Kazandzhyan R. K voprosu o datirovke Moskovskogo sovetko-turetskogo dogovora 1921 g.– «Vestnik obshchestvennykh nauk» NAN RA, 1999, № 1 (In Russian).
- Kazandzhyan P. K voprosu ob otsenke Moskovskogo russo-turetskogo dogovora 1921 g.– Strany i narody Blizhnego i Srednego Vostoka. XX. Yerevan, 2001 (In Russian).
- Kazandzhyan R. Russko-turetskie otnosheniya 1920–1921 gg. i vopros Armenii v svete sekretnykh dokumentov moskovskikh arkhivov.– «Sovremennoe sostoyanie i perspektivy razvitiya armenovedeniya». Sbornik dokladov mezhdunarodnogo simpoziuma. Yerevan, 2004 (In Russian).
- Khachatryan K. H. Hay-rusakan haraberutyunnere 1920–1922 tt., Yerevan, 2007 (In Armenian).
- Khachatryan K., Sukiasyan H., Badalyan G. Haykakan taratskneri brnaktsume Turkiayin yev Khorhrdayin Adrbejanin 1920–1930-akan tvakanerin, Yerevan, 2020 (In Armenian).
- Khatisyan Al. Hayastani Hanrapetutyan dsagume yev zargatsume, Beyrut, 1968 (In Armenian).
- Khurshudyan L. Hayastani bazhanume 1920 tvakanin, Yerevan, 2002 (In Armenian).
- Kocharyan V. Midjazgayin iravunk: Usumnakan dzernark, Yerevan, 2002 (In Armenian).
- Lazian G. Hayastan yev hay date: Hayevrus yaraberutyunneru loysin tak, Yerevan, 1991 (In Armenian).
- Marukyan A. Hayots tseghaspanutyan hetevankneri haghtharman himnakhndirner n u patmairavakan himnavorumnere, Yerevan, 2014 (In Armenian).
- Marukyan A. Moskvayi yev Karsi paymanageri midjazgayin-iravakan gnahatakane.– “Vem” hamahaykakan handes (Yerevan), 2011, tiv 2 (In Armenian).
- Marukyan A. Turkiayi midjazgayin-iravakan patasxanatvutyan himnakhndire: Ampopum yev arajarkner.– “Vem” hamahaykakan handes, Yerevan, 2010, tiv 1 (In Armenian).
- Melkonyan A. Hayots patmutyan dasern u patgamnere, Yerevan, 2013 (In Armenian).
- Melkonyan A. Tseghaspanutyun yev hayrenazrkum: Janachumits՝ hatutsum (hodvadsner yev hartsazruysner), Yerevan, 2015 (In Armenian).
- Mserlean Z. Erek dashnagirer (Aleksandrapoli, Moskuayi yev Karsi dashnagirere, 1920–1921 tt.), Peyrut, 1979 (In Armenian).
- Natali Sh. (Ter-Yakobyan Ya.). Erek dashnagrer (Agheksandrapoli, Moskuayi yev Karsi), Peyrut, 1957 (In Armenian).
- Papyan A. Hayrenatirutyun: Hayots pahanjatirutyun iravakan himunknere yev harakits hartser (Hodvadsneri zhoghovadsu), Yerevan, 2012 (In Armenian).
- Poghosyan St., Poghosyan K. Haykakan hartsi yev hayots tseghaspanutyan patmutyun, h. III (Haykakan hartse 1920–1922 tverin), girk II, Yerevan, 2003 (In Armenian).
- Sargsyan E. Davadir gordsark: Hayastan–Rusastan–Turkia, Yerevan, 1995 (In Armenian).
- Sarkisyan E. Za kulisami, kak rozhdalsya Moskovskiy dogovor 1921 g.– “Literaturnaya Armeniya» (Yerevan), 1991, № 1 (In Russian).

- Simonyan Hr. Nakhidjevani hartse Moskvayi 1921 t. marti 16-i rus-turkakan paymanagrum.– “Nakhidjevani himnahartse Moskvayi 1921 t. marti 16-i rus-turkakan paymanagrum” (gitazhoghovi nyuter), Yerevan, 2001 (In Armenian).
- Simonyan Hr. R. Turk-haykakan haraberutyunneri patmutyunits, Yerevan, 1991 (In Armenian).
- Tsavali paymanagr, kazm. T. Gh. Sahakyan, Yerevan, 2007 (In Armenian).
- Torikian Sh. Haykakan hartse yev midjazgayin orenke, Peyrut, 1976 (In Armenian).
- Vratsyan S. Hayastani Hanrapetutyun, Yerevan, 1993 (In Armenian).
- “Zhizn’ natsional’nostey” (M.), 04. III. 1921 (In Russian).
- Zohrabyan E. A. 1920 t. turk-haykakan paterazme yev terutyunnere, Yerevan, 1997 (In Armenian).
- Zohrabyan E. A. Nakhidjevanyan himnahartse (1920–1921), Yerevan, 2010 (In Armenian).
- Zohrabyan E. A. Sovetakan Rusastane yev hay-turkakan haraberutyunnere (1920–1922 tt.), Yerevan, 1979 (In Armenian).
- <https://easily.com/ru/news/2016/02/08/v-gosdume-predlozhili-rastorgnut-moskovskiy-dogovor-o-druzhbe-s-turciy-ot-1921-goda>.
- <https://newsarmenia.am/news/politics/mid-rf-izuchit-vopros-rastorzheniya-dogovora-po-kotoromu-gora-ararat-pereshla-k-turtsii/>.

РУССКО-ТУРЕЦКОЕ СОТРУДНИЧЕСТВО И МОСКОВСКИЙ
ДОГОВОР ОТ 16 МАРТА 1921 Г. ПО ОЦЕНКЕ АРМЯНСКОЙ
ИСТОРИЧЕСКОЙ НАУКИ
(1991–2020 гг.)

ЛИЛИТ ОГАНИСЯН

Р е з ю м е

Ключевые слова: Советская Россия, кемалистская Турция, Национальный обет, русско-турецкие переговоры, Московский договор, Армянский вопрос, Западная Армения, Карсская область, Сурмалинский уезд, Нахичеван, Александрополь.

В настоящее время армяно-турецкая государственная граница регулируется русско-турецким «Договором о дружбе и братстве», подписанным 16 марта 1921 г. в Москве. Если в советской армянской исторической науке он был оценен с точки зрения политико-идеологических интересов советского государства, то умозаключения ученых Армянской диаспоры были и остаются основанными на национально-государственных интересах армян.

После восстановления независимости Армении в 1991 г., армянские историки получили свободу переоценки русско-турецких переговоров 1920–1921 гг. и подписанного в их результате Московского договора. Историки Е. Саркисян, Э. Зограбян, Г. Галоян провели фундаментальные научные исследования по этим вопросам, а труды Гр. Симоняна, Г. Аветисяна, Л. Хуршудяна, А. Мелконяна, В. Казахеяна, А. Акопяна, К. Хачатряна, А.

issues, and the works of Hr. Simonyan, H. Avetisyan, L. Khurshudyan, A. Melkonyan, V. Ghazakhetsyan, A. Hakobyan, K. Khachatryan, A. Marukyan, R. Kazanjyan, A. Papyan and other historians stand out with new conceptual approaches.

The conclusions of Armenian historians complement each other and lead to the following: in 1920–1921, having different political, ideological and military interests, Soviet Russia and Kemalist Turkey, nevertheless, strove for cooperation in foreign policy relations, and the Moscow Treaty, signed as a result of the Russian–Turkish negotiations, became a new diplomatic victory for Turkey on the way of the resolution of the Armenian Question according to the Turkish version. According to this Treaty, Turkey strengthened its dominance over Western Armenia. Kars province and Surmalu district, torn away from the Republic of Armenia, were passed to Turkey. Nahkichevan province, most of Sharur–Daralagyaz district and a small part of Yerevan province were separated from Armenia and transferred as an autonomous territory under the protectorate of Soviet Azerbaijan.

Lilit Hovhannisyan – Candidate of Sciences in History, Associate Professor, Senior Researcher at the Department of History of the Armenian Question and Armenian Genocide at the NAS RA Institute of History. Scientific interests: the main issues of history and historiography of the Armenian Question and Genocide of Armenians. Author of 2 monographs, 5 methodical textbooks and over 40 articles. lilithovannisian@yahoo.com